

Ս Յ Ո Յ Գ Ի

Ստոյգ է, որ Հայն ամեն տեղ  
Ինչ ազգի մէջ պատահի,  
Իւր Հայրութիւն մի կողմ դրած՝  
Նորան նմանիլ կաշխատի:

Ստոյգ է, որ Հայերի մէջ  
Ով փող ունի, խելոք է,  
Իսկ աղքատը որքան զիտուն  
Վինի, դարձեալ մորոս է:

Եւ ընչիցն է.

Նորանից է, որ մեր նախնեաց  
Մեր չգիտեմք արժանիք,  
Ո՛չ հանճարի, ո՛չ զիտութեան  
Տեսած ե՛ր ճամ անուշիկ:

Ստոյգ է, որ Հայն ամեն տեղ,  
Որքան հարուստ եւ ուժեղ,  
Միշտ վիզը ճուղ ստրկի պէս  
Օտարաց ոտք կլիզէ:

Ստոյգ է, որ Հայն իւր կարօտ  
Եղբոր կողէկ տալ չուզէ,  
Մինչդեռ հարուստ օտարներին  
Իւր միլիօններ կզոհէ:

Եւ ընչիցն է.

Նորանից է որ միշտ տարուկ  
Մարմնով ապրել սիրած ենք,  
Ինքնօրհուժեան վնճ զգացմունք  
Մեր սրտից մէջ մարած ենք:

Ստոյգ է, որ Հայն այն բանով  
Բամբաստումէ միշտ Հային,  
Որի համար մեծ յարգանքով  
Գրուաւուումէ օտարին:

Ստոյգ է, որ Հայի համար  
Հայի մածունն ու թանը  
Այնչափ քաղցր չէ երեւում՝  
Որչափ այլոց չարթանը:

Եւ ընչիցն է.

Նրանից է, որ մեր մեր վերայ  
Զունիմք բարի համարմունք,  
Ո՛չ անձնական ո՛չ ազգային  
Զունիմք պատուոյ զգացմունք:

Ստոյգ է, որ երբ տեսնումէ  
Հայն թէ՛ օտարը քանդումն  
Իւր եղբոր տուն, մեծ եռանդով  
Ինքն էլ նորանց օգնումէ:

Ստոյգ է, որ Հայն պատրաստ է  
Հայի խրճիթ քանդելու,  
Նորա աղքատ բեկորներով  
Այլոց պալատ շինելու:

Եւ ընչիցն է.

Նորանից է, որ նախանձ ենք,  
Զկամիմք եղբոր յաջողում.  
Մեր մեր վնասով կամենում ենք  
Հաճոյանալ օտարաց:

Ստոյգ է, որ երբ յանձնում են  
Հային մի գործ ազգային,  
Շուտով նորա մէջ փնտռում է  
Միշտ շահերը իւր անմին:

Ստոյգ է, որ երբ համնում է  
Հայը մի մեծ պաշտօնի,  
Գժուարանումէ մտածել  
Շահերը իւր խելո՞ւ ազգի:

Եւ ընչիցն է.

Նորանից է, որ մեր միայն  
Լոկ խօսքով ենք ազգասէր.  
Եւ այս քառի պատրուակով  
Մեր քսակ կամիմք լցնել:

Ստոյգ է, որ ամեն ազգեր  
Վայելելու ազատ են  
Այն իրաւունք, զոր Հայք անզամ  
Մտքէ անցնել կարող չեն:

Եւ ընչիցն է.

Նորանից է, որ մեր գուշե  
Տակաւին մեր այդ իրաւանց  
Համպատասխան չունիմք ո՛չ ուժ,  
Ո՛չ ապացոյցք արժանեաց:

Զվշտանա՛մք, ազնիւ Հայեր,  
Այս տեսակ դառն խօսքերէն.  
Զի ցաւի սիրտ պէտք է ասել,  
Այս ամենն էլ ստոյգ են: